ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 11/15/3 «27» 11 2018 թ.

Ձեր

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ/ՀՎՀՀ 08617405/
Էլ. հասցեն dparuyr@mail.ru
տնօրեն պարոն Պ. Դանիելյանին
Հասցե՝ ք. Երևան, Ավան,
Դուրյան 35շ. 40բ.

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ ոստիկանության և «Արսեվ» ՍՊԸ-ի միջև 20.12.2017թ. կնքվել է N ՀՀ ԿԱ ՈԳՀԱՇՁԲ-2017-ՇԱ/5Մ/5 ծածկագրով պայմանագրի համաձայն Ձեր կողմից պետք է իրականացվեին պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված N 1, 8 և 9 չափաբաժիններով նշված շինարարական աշխատանքները (ՀՀ ոստիկանության վարչական շենքի կապիտալ վերանորոգում և սերվերային սենյակի հողանցում, Մալաթիա-Սեբաստիա և Նոր-Նորք վարչական շրջանների նոր հենակետերի կառուցում):

Պայմանագրի 1.3 կետի և N 2 Հավելվածով սահմանված օրացույցային գրաֆիկի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանված էր՝ 1-ին չափաբաժնի համար 30.05.2018թ., իսկ 8-րդ և 9-րդ չափաբաժիններով 30.09.2018թ.: ՀՀ ոստիկանության կողմից Ձեր դիմումի համաձայն 22.05.2018թ. թիվ 19-505/18 կնքվել է համաձայնագիր 1-ին չափաբաժնի վերաբերյալ 30.05.2018թ. ժամկետի երկարաձգման (30 օրացուցային օր) հիմք ընդունելով

պայմանագրի 8.6 կետի, իսկ 8-րդ և 9-րդ չափաբաժինների վերաբերյալ չի ստացվել դիմում՝ ժամկետների երկարաձման համար:

ՀՀ ոստիկանության 06.06.2018թ. N 11/612 և 15.08.2018թ. N 11/961 գրություններով Ձեզ տեղեկացվել էր, որ այդ օրվա դրությամբ կատարվել է պայմանագրի 1-ին չափաբաժնի մի մասը՝ (ՀՀ ոստիկանության վարչական շենքում կատարելու կապիտալ վերանորոգում և սերվերային սենյակում հողանցման աշխատանքները) 15.900.000 դրամ գումարի, որից մարվել է 10.034.600 դրամ, իսկ 8-րդ և 9-րդ չափաբաժիններում նշված շինարարական աշխատանքները (Մալաթիա-Սեբաստիա և Նոր-Նորք վարչական շրջանի հենակետերի) կառուցման մասով մինչ օրս որևէ աշխատանք չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի պահանջները՝ ՀՀ ոստիկանությունը 2018 թվականի նոյեմբերի 23-ին միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Արսեվ» ՍՊԸ- պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարներին փոխանցել 155.477 ՀՀ դրամ որպես տուգանք, ՝ պայմանագրի 6.3 կետի համաձայն (պայմանագրի 5.1 կետում նախատեսված պայմանագրի մնացորդային գնի 0.5 տոկոսը):

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 18.12.2017թ. ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 3.109.540 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի չկատարված գնի 10 տոկոսը):

Հարգանքով՝

Ոստիկանության գնդապետ **Վարդան Մովսիսյան**